

երեք օր քովը պահելէն ետեւ՝ կը հրամայէ որ երթայ Կէօմրիւկի Ս. Նիկողայոս եկեղեցին, ուր նախապէս պատուէր զըզած էր, որ զՎարանաղցին խցի մը մէջ փակեն «իբրեւ ի բանտի», ոչ կերակրեն, ոչ մեծարեն, ոչ թող տան եկեղեցի իջնել եւ քարոզել. հսկելով միանգամայն սենեկին վրայ, որ քովը մուտք եւ ելք չընեն: Գարանաղցին երկու անգամ պաղատանաց գիր կը գրէ Պատրիարքին, խնդրելով որ մեղմացընէ բարկութիւնը, ու կը վստահացընէ, թէ ինքը Երուսաղէմ երթալու ճամբայ ելած էր եւ ուխտաւորաց մեկնելուն կը սպասէր. «յայնժամն կու գնամ. ամենայն աշխարհն թող քեզ լիցի:», Պատրիարքը գրաբերին ձեռօք պատասխան կը զրկէ. «Ես զայս եւ զայն գիտեմ ոչ. թող ելնէ երթայ յատապով յայսմ աշխարհէ. եւ թէ ոչ՝ զինքն յէշ կու հեծուցանեմ, զերես կը մրեմ եւ քաղերդ կու անցուցանեմ ի պարանոցն եւ ամենայն քաղաքին նշաւակ կ'առնեմ»,

Գարանաղցի կը հեռանայ եկեղեցիէն, եւ Ախրը Գաբու բնակող քաղաքացիներու քով կը հիւրընկալուի. յետոյ Թօփ Գաբուի հայրենակիցներն իրեն առանձին տուն մը կը վարձեն: Այստեղ կ'երթեւեկեն Գրիգոր Պատրիարքին հակառակողները եւ դաւեր կը նիւթեն, մանաւանդ Յովհ. Ա. Խուլ շատ կ'ուրախանայ՝ երբ կը լսէ Գարանաղցոյն կրած նախատինքը, յուսալով որ զինքն իր կողմը կը շահի: «Աստուած գիտէ, կը գրէ Գարանաղցի, որ ես բնաւ չէի ուզեր խուլը, եթէ Կեսարացին այս «հալին»,